ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«23» դեկտեմբեր 2021թ. ՆՄՈ/60-2021

ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ ՄՈՒՏՔԱԳՐՎԱԾ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԽՆԴՐԱՆՔՈՎ ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԵԼՈՒ, ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԽՈՑԵԼԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՄԲԵՐԻՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԿԱՐԳԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 15-Ի N44 ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տարածքային կառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզում սոցիալական պաշտպանության բնագավառին առնչվող խնդիրները կանոնակարգելու նպատակով.

որոշում եմ՝

1. Ստեղծել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարան մուտքագրված սոցիալական աջակցության խնդրանքով դիմումների քննարկման հանձնաժողով՝ համաձայն N1 հավելվածի:
2. Հաստատել՝
   1) Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարան մուտքագրված սոցիալական աջակցության խնդրանքով դիմումների քննարկման հանձնաժողովի աշխատանքային գործունեության կարգը՝ համաձայն N2 հավելվածի.
   2) Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի սոցիալապես խոցելի հիմնական խմբերին աջակցություն տրամադրելու կարգը՝ համաձայն N3 հավելվածի:
3. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2018 թվականի հունիսի 15-ի << Հանձնաժողով ստեղծելու մասին>> N44 կարգադրությունը:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ Հ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

23.02.2021

VERIFIED OCSP 23.02.2021 15:38:30 GMT+4

Подписано: MATEVOSYAN HAMBARDZUM 2809920230

Հավելված N1
Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի
2021 թվականի փետրվարի 23 -ի
ՆՄՈ/60 -2021 որոշման

ԿԱԶՄ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ ՄՈՒՏՔԱԳՐՎԱԾ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԽՆԴՐԱՆՔՈՎ ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

Հանձնաժողովի նախագահ՝

Ա. Մեխակյան- Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի տեղակալ

Հանձնաժողովի քարտուղար՝

Ա. Ապիտոնյան- Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների բաժնի պետ

Անդամներ՝

Հ. Հարությունյան– Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ

Վ. Մկրտչյան- Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ

Ն. Պետրոսյան- Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ

Դ. Դավթյան- Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի քարտուղարության պետ

Լ. Հարությունյան- Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի իրավաբանական բաժնի պետ-գլխավոր իրավաբան

Գլխավոր քարտուղար՝ ***Ա. Հովհաննիսյան***

23.02.2021

VERIFIED OCSP 23.02.2021 15:29:29 GMT+4

Подписано: HOVHANNISYAN ARAM 3812640023

Հավելված N2
Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի
2021 թվականի փետրվարի 23-ի
ՆՄՈ/60-2021 որոշման

ԿԱՐԳ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ ՄՈՒՏՔԱԳՐՎԱԾ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԽՆԴՐԱՆՔՈՎ ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՍՏԵՂԾՎԱԾ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

1. Սույն կարգով սահմանվում են Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարան (այսուհետ՝ մարզպետարան) մուտքագրված սոցիալական աջակցության խնդրանքով դիմումների քննարկման նպատակով ստեղծված հանձնաժողովի (այսուհետ՝ հանձնաժողով) աշխատանքային գործունեության կարգը:

2. Սույն կարգի նպատակն է սահմանել հանձնաժողովի գործառույթները, հրավիրված նիստերի իրականացման և դիմումների քննարկման ժամկետներ:

3. Սոցիալապես խոցելի հիմնական խմբերին աջակցության տրամադրման կարիք առաջանալու դեպքերն են՝

1) մարզի սոցիալապես անապահով և կյանքի դժվարին իրավիճակում հայտված, բազմազավակ ընտանիքներ.

2) մարզի սոցիալապես անապահով, հաշմանդամություն ունեցող, առողջական խնդիրներ ունեցող անձիք.

3) մարզի միայնակ թոշակառուներ և տարեցներ (65 տարին լրացած անձինք).

4) մարզի միակողմանի, երկողմանի ծնողազուրկ և միակ ծնողի խնամքին գտնվող երեխաների ընտանիքներ.

5) ծառայության ընթացքում զոհված կամ հաշմանդամ դարձած զինծառայողների անապահով ընտանիքներ.

6) կացարան չունեցող կամ ժամանակավոր կացարանում բնակվող ընտանիքներ.

7) առաջադիմություն ունեցող, անապահով ընտանիքների ուսանողների ուսման վարձի մասնակի փոխհատուցում ստացող ուսանողներ.

8) մարզի աշխատունակ, սակայն գործազուրկի կարգավիճակ ունեցող անձանց՝ նրանց աշխատանքի տեղավորման խնդիրների լուծման անհնարինության դեպքում:

4. Հանձնաժողովը քննարկում է քաղաքացիների ներկայացրած դիմումները և մարզպետարանի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի մասնագետների և սոցիալական աջակցության տարածքային գործակալության դեպք վարողների ներկայացրած ընտանիքի կամ անձի կարիքների գնահատման թերթիկները և յուրաքանչյուր դիմումի համար ներկայացնում առաջարկություն համաձայն իրենց կարիքավորության աստիճանի և խնդիրների առաջնահերթության:

5. Հանձնաժողովը քննարկման արդյունքում կազմում և մարզպետին է ներկայացնում սոցիալական աջակցություն տրամադրելու վերաբերյալ առաջարկություն կամ հնարավորության դեպքում ներկայացնում է սոցիալական աջակցության տարածքային գործակալությանը եռամսյակային հրատապ դրամական օգնության տրամադրման:

6. Հանձնաժողովը նիստերը իրականացնում է տասնհինգօրյա ժամկետում, իսկ լրացուցիչ ուսումնասիրությունների անհրաժեշտության դեպքում կարող է երկարաձգվել, ևս տասնհինգօրյա ժամկետով:

7. Աջակցություն կարող է տրամադրվել մինչև 50.000 Հայաստանի Հանրապետության դրամի սահմաններում, բացառիկ դեպքերում հաշվի առնելով քաղաքացիների կարիքավորության առանձնահատկությունները, մարզպետի հայեցողությամբ կարող է սահմանվել դրամական աջակցության այլ չափեր:

8. Մեկ բյուջետային տարվա ընթացքում միևնույն անձին (ընտանիքին) աջակցությունը տրամադրվում է տարին մեկ անգամ, բացառիկ դեպքերում, հաշվի առնելով քաղաքացիների կարիքավորության առանձնահատկությունները մարզպետի հայեցողությամբ աջակցությունը կարող է կրկնվել:

9. Նիստերի իրականացման վերաբերյալ կազմվում է արձանագրություն, որը կցվում է մարզպետին ներկայացված առաջարկությանը:

Գլխավոր քարտուղար՝ ***Ա. Հովհաննիսյան***

23.02.2021

VERIFIED OCSP 23.02.2021 15:26:40 GMT+4

Подписано: HOVHANNISYAN ARAM 3812640023

Հավելված N3
Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի
2021 թվականի փետրվարի 23-ի
ՆՄՈ/60-2021 որոշման

ԿԱՐԳ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԽՈՑԵԼԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՄԲԵՐԻՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԱՄԱՆ

1. Սույն կարգով սահմանվում են Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի (այսուհետ՝ մարզ) բնակչության պետական սոցիալական պաշտպանության ծրագրերի իրականացման, սոցիալապես խոցելի հիմնական խմբերին աջակցության տրամադրման կարգը:

2. Աջակցությունը տրամադրվում է յուրաքանչյուր տարի բնակչության պետական սոցիալական պաշտպանության ծրագրերի իրականացման, սոցիալապես խոցելի հիմնական խմբերին աջակցության տրամադրման համար պետական բյուջեից հատկացվող ֆինանսական միջոցներից, եռամսյակային կտրվածքով:

3. Սոցիալապես խոցելի հիմնական խմբերին աջակցության տրամադրման խնդիրներ են սահմանվում՝

1) մարզի սոցիալապես անապահով և կյանքի դժվարին իրավիճակում հայտված, բազմազավակ ընտանիքներին աջակցությունը

2) մարզի սոցիալապես անապահով, հաշմանդամություն ունեցող, առողջական խնդիրներ ունեցող անձանց աջակցությունը

3) մարզի միայնակ թոշակառուներին և տարեցներին (65 տարին լրացած անձինք) աջակցությունը

4) մարզի միակողմանի, երկողմանի ծնողազուրկ և միակ ծնողի խնամքին գտնվող երեխաների ընտանիքներին աջակցությունը

5) ծառայության ընթացքում զոհված կամ հաշմանդամ դարձած զինծառայողների անապահով ընտանիքներին աջակցությունը

6) կացարան չունեցող կամ ժամանակավոր կացարանում բնակվող ընտանիքներին աջակցությունը

7) բարձր առաջադիմություն ունեցող, անապահով ընտանիքների ուսանողների ուսման վարձի մասնակի փոխհատուցումը

8) մարզի աշխատունակ, սակայն գործազուրկ անձանց աջակցությունը նրանց աշխատանքի տեղավորման խնդիրների լուծման անհնարինության դեպքում:

4. Որպես սոցիալապես խոցելի հիմնական խմբերին աջակցության տրամադրման համար հիմք է հանդիսանում քաղաքացիների կողմից ներկայացված դիմումները, քաղաքացիական հասարակության այլ ինստիտուտների կողմից ներկայացված գրությունները:

5. Այն դեպքում, սոցիալապես խոցելի հիմնական խմբերին աջակցության տրամադրման համար դիմել են հասարակական կազմակերպությունները և միավորումները, ինչպես նաև քաղաքացիական հասարակության այլ ինստիտուտները, ապա վերջիններիս կողմից լիազորված ներկայացուցիչը մարզպետարան է ներկայացնում առաջացած խնդրի վերաբերյալ դիմում՝ նշելով դրա նպատակը և անհրաժեշտության հիմնավորումը, խնդրի կարգավորման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցի չափը և անհրաժեշտության հիմնավորումը

հավաստող փաստաթղթեր, եթե դրանք առկա են:

6. Սույն կարգի 3-րդ կետում սահմանված սոցիալապես խոցելի հիմնական խմբերին աջակցության տրամադրման նպատակով մարզպետի որոշմամբ՝

1) ստեղծվում է մարզպետարան մուտքագրված սոցիալական աջակցության խնդրանքով դիմումների քննարկման նպատակով ստեղծված հանձնաժողով, հաստատելով անհատական կազմը և աշխատանքային գործունեության կարգը

2) դիմումներին սահմանված կարգով ընթացք տալու նպատակով մարզպետարանի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի մասնագետները և սոցիալական աջակցության տարածքային գործակալության դեպք վարողները կարգով սահմանված ժամկետներում հանձնաժողովին են ներկայացնում ընտանիքի կամ անձի կարիքների գնահատումը.

3) մշտական հանձնաժողովը կարքի գնահատման հիման վրա, սույն կարգով սահմանված դրույթներին համապատասխան, մարզպետին է ներկայացնում սոցիալական աջակցություն տրամադրելու վերաբերյալ առաջարկություն:

4) մարզպետը ուսումնասիրելով համապատասխան առաջարկությունը կայացնում է որոշում քաղաքացիներին դրամական աջակցություն ցուցաբերելու վերաբերյալ, յուրաքանչյուրին իր կարիքին համապատասխան:

7. Դրամական աջակցություն ցուցաբերելու դեպքում գումարը տրամադրվում է անկանխիկ/ բացառիկ դեպքերում կանխիկ/՝ համապատասխան բանկային հաշվեհամարին փոխանցելու միջոցով:

8. Սոցիալական աջակցություն կարող է տրամադրվել նաև ոչ դրամական ձևով:

9. Մեկ բյուջետային տարվա ընթացքում միևնույն անձին (ընտանիքին) աջակցությունը տրամադրվում է տարին մեկ անգամ, բացառիկ դեպքերում, հաշվի առնելով քաղաքացիների կարիքավորության առանձնահատկությունները մարզպետի հայեցողությամբ աջակցությունը կարող է կրկնվել:

10. Ուսման վարձի մասնակի փոխհատուցման ձևով սոցիալական աջակցություն տրամադրվում է պետական (նաև՝ պետության կողմից հավատարմագրված ոչ պետական) բարձրագույն կամ միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում սովորող, առաջադիմություն ունեցող, անապահով ընտանիքների ուսանողներին :

11. Սոցիալական աջակցությունից չեն կարող օգտվել Արմավիրի մարզի վարչական տարածքում բնակվող, հաշվառում չունեցող քաղաքացիները, ինչպես նաև մարզպետարանի աշխատողները, ինչպես նաև վերջիններիս հետ մերձավոր ազգակցությամբ կամ խնամիությամբ կապված անձիք (ծնող, ամուսին, զավակ, թոռ, եղբայր, քույր), եթե նրանք վարում են համատեղ տնտեսություն:

Գլխավոր քարտուղար՝ ***Ա. Հովհաննիսյան***

Недействительная подпись

VERIFIED OCSP 23.02.2021 15:28:05 GMT+4

Подписано: HOVHANNISYAN ARAM 3812640023